

ՎՆԱՍԱԿԱՐ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԴԵՍ  
ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ՝  
ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2023



Մշակարույսերից ստացված համաշխարհային պոտենցիալ բերքի մոտ 40%-ը ոչնչացնում են վասակար օրգանիզմները մինչև բերքահավաքը: Մոտ 20%-ը ոչնչանում է բերքահավաքից հետո պահեստներում: Գյուղատնտեսական մշակարույսերի աճեցման և դրանցից բարձր բերք ստանալու համար վճռորոշ նշանակություն ունի դրանց պաշտպանության նոր, ժամանակակից մեթոդների կիրառումը:



Վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է ճանաչել վասակար օրգանիզմների տեսակները, ծանոթ լինել դրանց կենսակերպին ու

զարգացման առանձնահատկություններին, բազմակողմանիորեն իմանալ վասակար օրգանիզմների հասցրած վնասի ձևերը, բնույթը և ժամկետները:

Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը (ՎԴԻՊ) փաստատուների դեմ պայքարի բոլոր հնարավոր մեթոդների համադրումն է և միջոցառումների հետևողական ինտեգրումը, որը ճնշում է փաստակար օրգանիզմների պոպուլյացիաների զարգացումը և պետիցիդների օգտագործումն ու այլ միջամտությունները պահում է այնպիսի մակարդակի վրա, որը տնտեսապես հիմնավորված է, ինչպես նաև կրճատում կամ նվազագույնի է հասցնում վտանգը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար:



ՎԴԻՊ-ի նպատակն է ամենաարդյունավետ միջոցներով նվազեցնել մարդկանց, կենդանիների և միջավայրի վրա բացասական ազդեցության վտանգը: Սա էկոլոգիական մոտեցում է, որն էականորեն նվազեցնում կամ բացառում է թունաքիմիկատների օգտագործումը:



Վնասատուներից պաշտպանվելու համար կիրառվում են հետևյալ մեթոդները՝ ագրոտեխնիկական (հողի մշակում, պարարտացում, առողջ սերմանյութի օգտագործում, ոռոգում, ցանքաշրջանառություն և այլն), կենսաբանական (կենսաբանական պատրաստուկների օգտագործում, օգտակար միջատների՝ էնտոմոֆագերի բազմացում և տարածում, բնական թշնամիների՝ մակարոյժների, գիշատիչների և հիվանդությունների հարուցիչների՝ բակտերիաների, վիրուսների, սնկերի օգտագործում և այլն), ֆիզիկական-մեխանիկական (վարակված բուսական մնացորդների հավաք և ոչնչացում, էտի




ժամանակ վարակված ճյուղերի, շիվերի հեռացում, մուլախոտերի ոչնչացում, որսող գոտիների, ֆերոմոնային թակարդների կիրառում և այլն), բույսերի կարանտին (խիստ հսկողության սահմանում արտերկրից ներմուծվող սերմանյութի, տնկանյութի և այլ ծագում ունեցող բուսական նյութերի վրա), քիմիական (ընտրողական ազդեցության թունաքիմիկատների, միջատասպան օձառի, վանող նյութերի և այլ միջոցների օգտագործում):

ՎԴԻՊ-ի համակարգում խնդիր չի դրվում ամբողջությամբ վերացնել վնասակար օրգանիզմները: Այն նպատակ ունի վնասատուի պոպուլյացիայի թվաքանակը պահել տնտեսական վնասի մակարդակից ցածր սահմանի վրա:

## ՎԴԻՊ-ի հիմնական քայլերը

- Իմանալ տեղական գյուղատնտեսական մեթոդները և պաշտպանության ենթակա մշակաբույսերի բնութագրերը
- Իմանալ մշակաբույսի վրա ազդող տեղական միջատների ֆաունան և բացահայտել հիմնական և երկրորդային ժառանգությունները և այլն
- Իմանալ վերահսկվող տեսակների կենսակոլոգիան և միջատ-բույս փոխազդեցությունները
- Իրականացնել ֆիտոֆագերի (բուսակերների) և օգտակար պոպուլյացիաների մշտադիտարկում: Յուրաքանչյուր ժառանգուի առումով կարևոր է իմանալ երբ կատարել մշտադիտարկում, ինչպիսի մեթոդներ ու գործիքներ օգտագործել: Մշտադիտարկման համար օգտագործվող ավանդական գործիքներից են միջատների որսացանցերը, կպչուն ժապավենները և ֆերոմոնային թակարդները:
- Հավաքագրել հիմնական օդերևութաբանական տվյալները (ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, անձրև) միջատների կենսաբանության հետ հարաբերակցությունների հաստատման, կանխատեսման մոդելների և սրկուժների ժամկետների կիրառման համար և այլն



- Մշակաբույսերը տնկել այնպիսի վայրում և այն ժամանակ, երբ տնտեսական փաստի լուրջ վտանգ չկա
- Տնտեսական փաստակարարության շեմը գերազանցելու դեպքում, փաստատուների պոպուլյացիաների դեմ պայքարելու համար նախ հարկավոր է կիրառել շրջակա միջավայրի վրա նվազ ազդեցությամբ բույսերի պաշտպանության մեթոդներ (մեխանիկական, ագրոտեխնիկական, կենսաբանական):
- Եթե վերը նշված միջոցները բավարար չեն մշակաբույսի պաշտպանության ապահովման համար, ապա պետք է կիրառվեն թունաքիմիկատներով սրսկումներ ընտրելով
  - մշակաբույսի համար թույլատրված ակտիվ բաղադրիչով (ազդող նյութ) թունաքիմիկատ, որը կունենա ընտրողական ազդեցություն և ցածր թունայնություն,
  - ժապավենային սրսկում դաշտի շրջագծով կամ «թեժ կետերում» (բարձր վարակվածության վայրեր):





## Վնասակար օրգանիզմների զարգացման ամենակարևոր կանխարգելիչ միջոցառումները

- Դաշտի սանիտարական մաքրում: Վարակված բույսերի, այդ թվում՝ բուսական ժառանգությունների հեռացումը նվազեցնում է վնասատուների տեղափոխումը մեկ տնկարկից մյուսը և դրանով իսկ կանխում կրկնակի վարակումը:
- Ագրոտեխնիկական միջոցառումներ՝ առողջ օրգանական հողերի օգտագործում, հողի մշակում, դիմացկուն սորտերի մշակություն, միջշարային տարածության ճշգրտում, ցանքաշրջանառություն, տնկման կամ բերքահավաքի ժամկետների փոփոխություն, «խայծ» մշակաբույսերի տնկում:
- Բնական թշնամիների թվաքանակի ավելացում: Դա կարելի է ապահովել դաշտի կամ այգու եզրերին տարբեր «խայծ» մշակաբույսերի ու թփերի տնկմամբ, որոնք ծաղկում են ապրիլից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Ստեղծելով հարուստ կենսաբազմազանությամբ հողագործության համակարգեր՝ ավելանում են ինքնակարգավորման մեխանիզմները և, համակարգերը հակված են ավելի «դինամիկորեն կայուն» լինելուն:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը՝ որպես այլընտրանքային մոտեցում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2  
Հեռ.՝ (+374 10) 52 36 04  
Էլ.փոստ՝ [officeawhhe@awhhe.am](mailto:officeawhhe@awhhe.am)  
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>